ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«05» փետրվարի 2026թ. N 15-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 31-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանի 1-ին հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությունը և 15-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից 2026 թվականի փետրվարի 3-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված՝ քաղաքաշինության բնագավառում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «Անվտանգ աշխատանքի կազմակերպում շինարարության ոլորտում» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել 12 տեսական կրեդիտ:

2. Հաստատել «Անվտանգ աշխատանքի կազմակերպում շինարարության ոլորտում» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 1-ին կետով նախատեսված միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2/5/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2026 թվականի փետրվարի 05 **-ի N** 15**-Ա հրամանի**

«Անվտանգ աշխատանքի կազմակերպում շինարարության ոլորտում» միջոցառման ժամանակացույց

Հ/Հ	Ամսաթիվ	Ժամ	Թեմայի անվանում	Դասախոսի անուն և ազգանուն	Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը	Միջոցառման կրեդիտները	Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը	Մասնակցության վճարի չափը
1	2	3	4	5	6	7	8	9
1	փետրվարի 1-26	18.00	«Անվտանգ աշխատանքի կազմակերպում շինարարության ոլորտում» ***վերապատրաստման դասընթաց*** Ձևաչափը՝ խառը, հիբրիդային ձևաչափ, ZOOM հարթակ	Աշոտ Գուրգենի Պողոսյան, Արմինե Բագրատի Ղույլան	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, Տերյան 105	12 տեսական	1-ին կարգի, 2-րդ կարգի և 3-րդ կարգի մասնագետներ 05,06,13,14,17,18,21,22,25,26 մասնագիտություն	48000 ՀՀ դրամ